ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 16 հուլիսի 2019 թվական

Արձանագրություն N 6

ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հերթական նիստի

Նախագահ՝ Տիգրան Խաչատրյան

Քարտուղար՝ Սուրեն Պետրոսյան

Ներկա էին խորհրդի 10 անդամներից 7-ը:

Բացակայում էին՝ Արսեն Թորոսյան, Կարեն Միրզաբեկյան և Կարեն Սահակյան:

Հրավիրվածներ՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Արթուր Մկրտչյան և ՀՀ վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի փորձագետ Տարոն Հակոբյան:

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախորդ խորհրդի նիստին տրված հանձնարարականների մասին զեկույց:

   Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյան

2. Հավանություն տալ՝ Տեսչական մարմնում փորձարկումների կատարման նպատակով լաբորատոր ստորաբաժանում ստեղծել:

   Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյան

3. Հավանություն տալ՝ հանրությունից ստացվող բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացք տալու կարգի մեջ փոփոխություն կատարելուն :

   Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյան

4. Հավանություն տալ՝ արտադրանքի և որակի վերահսկողության ծառայության ծրագրում փոփոխություններ կատարելու մասին նախագծին:

   Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյան

5. Գործունեության ընթացքում ի հայտ եկած անհետաձգելի և տեխնիկական բնույթ կրող հարցերին լուծում տալու լիազորությունը վերապահել տեսչական մարմնի

Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյան

6. Հաստատել՝ տեսչական մարմնի բյուջետային հայտի նախագիծը

Զեկուցող՝ Ա.Կոտոյան

7. Տեսչական մարմնի 2019թվականի առաջին կիսամյակի հաշետվություն:

Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյան

8. Տեսչական մարմնի 2019 թվականի առաջին կիսամյակի ստացված բողոքների մասին վիճակագրության հաշվետվության ներկայացում:

Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյան

9. Որակի ապահովման ստորաբաժանման գործունեության 2019 թվականի տարեկան ծրագրի հաստատում:

Զեկուցող՝ Ա.Սարգսյան

10. Տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդաբանության հաստատում:

Զեկուցող՝ Ա.Սարգսյան

Նիստը բացեց խորհրդի նախագահ, էկոնոմիկայի նախարար Տ. Խաչատրյանը: Ողջունելով ներկաներին՝ արձանագրվեց, որ նիստին մասնակցում են խորհրդի 7 անդամներ, և քվորում առկա է: Ա. Ասոյանի և Ա. Կոտոյանի առաջարկով օրակարգային հարցերը կրացվեցին երկու նոր հարցերով՝

11. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2019թ. պետական բյուջետային հայտի նախագծում փոփոխություն կատարելու վերաբերյալ նախագծին հավանություն տալու վերաբերյալ կառավարման խորհրդի որոշման նախագիծ.

12. Քննարկել Տեսչական մարմնում տեսչական մարմնի բյուջետային գործընթացի պատասխանատուի հաստիք նախատեսելու հարցը:

Տ. Խաչատրանը ներկայացված օրակարգի լրացված նախագիծը դրեց քվեարկության. կողմ 7 դեմ 0

Օրակարգը հաստատվեց:

Հարց 1.

Ա. Կոտոյանը ներկայացրեց նախորդ նիստի ընթացքում տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունը՝ նշելով, որ

ստուգումների ընթացակարգում նախատեսած օրենսդրական փոփոխությանն արդեն կառավարությունը հավանություն է տվել և ուղարկվել է ԱԺ:

Խորհրդի նախագահ Տիգրան Խաչատրյանի առաջարկով Խորհուրդը հանձնարարեց հաջորդ խորհրդի նիստերին տրված հանձնարարականների վերաբերյալ տալ ամփոփ տեղեկանք՝ ներառելով այն նախապես տրամադրվող նյութերի մեջ:

Հարց 2.

Արմեն Կոտոյանը ներկայացրեց առաջարկություն տեսչական մարմնում փորձարկումների կատարման նպատակով լաբորատոր ստորաբաժանում ստեղծելու վերաբերյալ:

Խորհրդի անդամները մտքեր փոխանակեցին լաբորատոր ստորաբաժանման ստեղծման իրավական հիմքերի և ծախսերի կրճատման հնարավորությունների վերաբերյալ:

Խորհրդի անդամները, հավանություն տալով լաբորատորիան օգտագործելու գաղափարին, առաջարկեցին լաբորատոր ստորաբաժանում ստեղծելու հարցը քննարկել հաջորդ խորհրդի նիստին՝ Տեսչական մարմնին հանձնարարելով ներկայացնել ստորաբաժանման ստեղծման հետ կապված հիմնավոր փաթեթային առաջարկ կամ դիտարկել տվյալ լաբորատորիան օգտագործելու այլընտրանքային տարբերակ:

Հարց 3.

Արմեն Կոտոյանը ներկայացրեց խորհրդի որոշմամբ հաստատված հանրությունից ստացվող բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացք տալու կարգի մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագիծը:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակում, Խորհրդի անդամ Մելիտա Հակոբյանն առաջարկեց հնարավորինս մեղմ վերաբերմունք դրսևորել տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ՝ ստացված բողոքները առաջին հերթին օգտագործելով ռիսկերի հաշվարկման նպատակով:

Հարցը դրվեց քվեարկության՝ կողմ 7, դեմ 0:

Խորհուրդը որոշեց՝ Հավանություն տալ հանրությունից ստացվող բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացք տալու կարգի մեջ փոփոխություն կատարելու մասին խորհդրի որոշման նախագծին:

Հարց 4

Արմեն Կոտոյանը ներկայացրեց արտադրանքի և որակի վերահսկողության ծառայության ծրագրում փոփոխություններ կատարելուն հավանություն տալու մասին խորհրդի որոշման նախագիծը:

Խորհդրի անդամները փաստեցին, որ նմանատիպ հարցերը կրում են ավելի շատ տեխնիկական բնույթ:

Խորհրդի նախագահ Տիգրան Խաչատրյանը առաջարկեց հավանություն տալ նախագծին և հարցը դրեց քվեարկության.

կողմ 7

դեմ 0

Խորհուրդը որոշեց՝ Հավանություն տալ արտադրանքի և որակի վերահսկողության ծառայության ծրագրում փոփոխություններ կատարելու մասին նախագծին:

Հարց 5.

Շարունակելով նախորդ հարցի ներկայացման ընթացքում ծավալված քննարկումը Ա. Կոտոյանը ներկայացրեց Կառավարման խորհրդի որոշման նախագիծ համաձայն որի տեսչական մարմնի ղեկավարը լիազորվում է մինչև 2.000.000 ՀՀ դրամի սահմաններում բյուջեով նախատեսված ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի պահպանման ծախսերում, ծրագրերում և գնումների անվանացանկում ըստ անհրաժեշտության կատարել ներտողային փոփոխություններ առանց խարհրդի անդամների լրացուցիչ համաձայնության:

Հարցի վերաբերյալ արտահայտվեցին Խորհրդի նախագահ Տիգրան Խաչատրյանը և խորհրդի անդամ Արմեն Հայրապետյանը:

Հարցը դրվեց քվեարկության. Կողմ 7, Դեմ 0:

Խորհրդի հաստատեց ներկայացված նախագիծը՝ տալով տեսչական մարմնի ղեկավարին համապատասխան լիազորությունը:

Հարց 6.

Ա. Կոտոյանը նրեկայացրեց բյուջետային հայտի նախագիծը: Ա.Կոտոյանը հայտնեց, որ << 2019թ.պետական բյուջեով նախատեսվել է– 180,0մլն. դրամ, << 2020-2022 թթ. ՄԺԾԾ բյուջետային հայտով նախատեսվում է 2020թ.՝ - 218.3 մլն. դրամ, 2021 թ. – 183,4 մլն. դրամ, 2022 թ. -187,0 մլն. դրամ: Վարչական սարքավորումների հոդվածով միայն 2020թ. նախատեսվել – 38,4 մլն. դրամ: << շուկայի վերահսկողության տեսչական մարմինը զբաղեցնում է ք. Երևան, Կոմիտաս 49/2 հասցեում 1058,3 քառ. մ. տարածք, որից 833,3 քառ. մ. վերանորոգված է, իսկ 225,0 քառ.մ. տարածքը գտնվում է անմխիթար վիճակում, ինչի հետևանքով չի օգտագործվում: << 2017-2019թթ. պետական բյուջեով չի նախատեսվել այդ նպատակի համար գումար: << 2020 թ. պետական բյուջետային հայտով նախատեսվում է 25.0 մլն. դրամ, որը ուղվելու է վերը նշված 225,0 քառ. մ. տարածքի հիմնանորոգման համար: Տեղի ունեցավ մտքերի փոխանակում և նախագիծը դրվեց քվաերկության:

Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Նախագիծը ստացավ խորհրդի հավանությունը:

Հարց 7.

Ա. Կոտոյանը ներկայացրեց 2019թ. 1-ին կիսամյակի տեսչական մարմնի գործունեության հաշվետվությունը: Խորհուրդը լսեց հաշվետվությունը: Ա.Ասոյանը նշեց, որ տարեկան գործունեության ծրագրով առաջին կիսամյակում պետք է իրականացվեր 131 ստուգում, սակայն հաշվետվության մեջ նշված է, որ կատարվել է 107 ստուգում, փաստացի 24 ստուգում չի իրականացվել: Ա.Մկրտչյանը հայտնեց, որ գործունեության ծրագրից տեսչական մարմինը չի շեղվել, թվով 24 ստուգման հրաման ևս արձակվել է առաջին կիամյակի ընթացքում, որոնք դեռևս չեն ավարտվել, ուստի դրանք դեռևս չեն ընդգրկվել հաշվետվության մեջ: Հարցը դրվեց քվեարկության. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Խորհորդը հաստատեց ներկայացված հաշվետվությունը:

Հարց 8.

Ա. Կոտոյանը ներկայացրեց 2019թ. 1-ին կիսամյակի ընթացքում տեսչական մարմնի ստացած բողոքների վերաբերյալ հաշվետվություն: Խորհրդի անդամ Ա.Ասոյանը նշեց, որ նա անհամապատասխանության ստացված դիմումների քանակի և դրանց հիման վրա

կատարված ստուգումների քանակի միջև: Հրավիրված Ա.Մկրտչյանը հայտնեց, որ ստուգումներ իրականացվել են թվով 16 դիմում-բողոքների հիման վրա, որոնցից մի քանիսի հիման վրա ստուգումներ կատարվել են 1-ից ավելի տնտեսվարող սուբյեկտների մոտ:

Խորհուրդը լսեց հաշվետվությունը: Հարցը դրվեց քվեարկության. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Խորհորդը հաստատեց ներկայացված հաշվետվությունը:

Հարց 9.

Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ Ա. Սարգսյանը ներկայացրեց ստորաբաժանման գործունեության տարեկան ծրագիրը:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, Ա. Սարգսյանը նշեց, որ, չնայած ծրագիրը հաստատվում է միայն հուլիսին, բայց փաստացի ծրագրում առկա գործողություններն իրականացվել են տաեսկզբից հիմք ընդունելով առկա օրենսդրական բոլոր կարգավորումները:

Ծրագրի նախագիծը դրվեց քվեարկության. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Խորհորդը հաստատեց ներկայացված ծրագրի նախագիծը:

Հարց 10.

Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ Ա. Սարգսյանը ներկայացրեց տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդաբանությունը:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակություն: Տ.Խաչատրյանն առաջարկեց վերապահումով հաստատել ներկայացված նախագիծը՝ Ա.Ասոյանի հետ համաձայնեցնելով վերախմբագրված տարբերակը:

Հարցը դրվեց քվեարկության. կողմ 7 դեմ 0

Խորհուրդը որոշեց՝ Հաստատել տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդաբանության՝ տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ համաձայնեցված տարբերակը:

Հարց 11.

Ա. Կոտոյանը ներկայացրեց շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2019թ. պետական բյուջեի տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով նախատեսված ծախսերի փոփոխություն կատարելու վերաբերյալ նախագիծ: Արտահայտվեց խորհրդի նախագահ Տ.Խաչատրյանը՝ առաջարկելով հաստատել այն:

Նախագիծը դրվեց քվեարկության. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Խորհուրդը հաստատեց ծախսերի փոփոխության նախագիծը:

Հարց 12.

Խորհդրի անդամները քննարկեցին Ա. Ասոյանի կողմից առաջարկվող հարցը, համաձայն որի տեսչական մարմնում առաջիկայում պետք է նախատեսվի բյուջետային գործընթացի պատասխանատուի հաստիք: Խորհրդի անդամները հավանություն տվեցին գաղափարին՝ հաշվի առնելով, որ տեսչական մարմնի բյուջետային հայտը ներկայացվում է տեսչական մարմնի կողմից, ինչը ենթադրում է որոշակի մասնագիտական գիտելիքներ:

Խորհրդի նախագահ՝ Տիգրան Խաչատրյան

Խորհրդի անդամներ՝ Արթուր Ասոյան

Ավագ Ավանեսյան

Արմեն Հայրապետյան

Արտակ Ասատրյան

Մելիտա Հակոբյան

Աբգար Մկրտչյան

Քարտուղար՝ Սուրեն Պետրոսյան